

ՀԱՅ · ՊՈՍՏԻՆԻԿԵԱՆ · ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ

የኢትዮጵያ ባሮንበትዎችና ከድር

(Հարութակութիւն տես Բազմ. 1922 ՅուԹԱՐ. էջ 19)

### § 3. – Եղ. Յովեաննէս Փլրկենտացի.

Քոնացւոյն զարծէն առաջ Եր. Բարթողի-մէսոփի հետ Պարթևաց սահմաններուն մէջ աշխատած ըլլայ, սակայն 1330-33 հազիւ կրնար Քոնացւոյն միարանութեան մէջ միասին ապրիւ, վասն զի 1329ին յլլեռ-մուսս էր, և անկէ գառնալուն՝ (1330) ճամբրորդեց ոչ Հայաստան, այլ ի Վրաստան՝ ուր եպիսկոպոսական աթոռ շնորհուած էր իրեն. և շտո հաւատալի չէ որ նախ Քոնա գացած ըլլայ, որովհետեւ Թիֆլիզի զի աթոռը նոր էր և թեմն ալ ի հիմանց հաստատուելիք: — Հաւանարար գերջէն եկաւ Քոնա, շուրջ 1336 կամ 37ին, ուր առաջին Արքանողաց ուժանել տուաւ. և այն ատեն կրցաւ գրիւ գերոյիշեալ զիրքը՝ իթէ կալանոս սիսալմամբ ատոր չի գերազարեց ինչ որ Յովհ. Անկլոսին կամ ուրիշ Յովհաննէսի մը պէտք էր՝ հասկցուիլ:

Պէտք չէ նոյնացնել ժամանակակից եղ. թովէ. Փլրուենուացւոյ հետ՝ որ կրտսեր Եղբարց կարգէն էր և կը բնակէր Դաւ-ը ժի վանըը:

Նախ ծառայ էր ֆար. եղբարց, յետոյ  
աշխատաւոր եղբարց զգեստը կ'առնու, և  
սրբութեամբ ամենուն բարի օրինակ կ'ըլ-  
լարց. Հոգոց փրկութեան եռանդով վա-  
ռուած կ'ուզէ ազգերու մէջ շըչուն քա-  
րողել. ուր բահանայ ձեռնազբուժով երեց  
լեզու կը սրբի և մեծ ազգութեամբ խօ-  
սելով արեւելան ժողովրդոց՝ շատերը կը  
զարձնէ. Հուսակ յետոյ Յովհ. իթ. Պապը,  
Զմրւանիոյ եպիսկոպոսական աթոռութիվ-  
լիզ փոխարքելով, հնա առաջին եպս. կը  
կարգէ զինքը Թ Ապրիլ, 1330ին, ցատ  
կոնդակազրի ֆար. Կարգին թ. էջ 186,  
որ այն ատեն յլլըսմուսս էր և Ալեքսիո-  
սէն Արքեւլը երթալով կ'ուղղուի թիվիլիզ:  
Ուրիշ կոնդակէ մ'ալ կ'իմանանք (որով  
իրեն յաջորդ կը կարգուէր եղ. Բներգրան-  
տոս Քուլէթթի), որ մեռաւ 1348ին,

կալանոս Յովիտանոս համբար կ'ըսէ.  
«Եր, Բարթովիմչոսի ընկերներէն մին  
էր, ինչպէս յայտնի է նոյն եղ. Յովիտան  
նէսէն թարգմանուած գրքէ մը՝ որուն վերջը  
այս այ նշանակուած է»:

Իր գրական գործունելութեան վրայ այս  
է միակ վկայութիւնն զոր ունինք: Անըուշա  
սերտ յարաբերութիւն մ'ունեցած պիտի  
ըլլայ Քոնացոյն և իր ընկերներուն հետ,  
վասն զի Միաբանողաց կարգն հաստա-  
տուելէ զերջ՝ ասոր առջն ուխտեցին Ցով-  
հաննէս և իր ընկերակիցները: Բայց զդուար  
է սահմանել թէ Երբ անոնց հետ միասին  
էր: Եւ ոչ ալ անկարեի կը թուի որ

9

ԵՐ. ԲԱՐԹՈՒՂԻՄՔՈՍԻ ԲՆԻԿ ԸՆԿԵՐՆԵՐՆ

1. — Ցովիաննէս Քռնացի.

Յովհաննէս Արքայ, ծնունդ Քոնայի,  
Նախկին և ամենահաւատարիմ գործակիցն  
եղաւ Բարթողիմէոսի ու վերջէն հայր և  
Հիմազիր Միհարանողաց, Քոնա անուամբ  
զանազան տեղեր կան, արկմտեայց ստէպ  
կը շփոթեն զանոնց: Մեր Քոնան Յովհանն  
ու մօրեղբօր՝ Գէորգայ ստացուածքն էր,  
Երնջակ գաւառին մէջ. սա մօտակայ նշա-  
նուոր գանցին բարերարն եղաւ, եթէ ոչ  
Հիմազիրը, Յովհաննէս իր սրբազան ու-  
սումներն աւարտեց Եսայի Նչեցի մեծ  
Քարտագետին քով, և յետոյ արքայ Կար-  
գուեցաւ այդ վանցին:

Մարաղայի մէջ Բարթողմէնսոսի և առողջ ընկերներուն հայ լեզուն սորցիցուց (1328-29): Կ'ըսուի թէ այդ ատենները հայրէն զիրը մ'ալ յօրինեց խոճի դիպուածներու վրայ և Եր. Բարթ.ի հատ Գիրք եօրն խորհրդոց և ուրիշ զրութիւններ թարգմանեց լատիններէնէ: Նոյնպէս ինըը սրբազրեց Քանայի ժողովին հրաւիրող շրջարերականին ուն ու լեզուն, և Ա. Թովմ. Ագուինացւոյն զրուածներէն Քրիստոսի մի անձին և երկու բնութեանց վրայի ճառերը Եր. Բարթողմէնսոսի հետ հայացուց: Լալանոս կը պահէ նաև մեր շատ անգամ յիշած Յովհաննու մէկ հայերէն նամակը, որ այդ միութեան ծագումն ու Միարանողաց կարգին սկիզբը կը պատմագրէ: Իրեն ընծայուած փոքր զրութիւնները կորսուած կը համարին Սոմալ և Նիւման: բայց Վեննայի Միսիթ. գրատունը կը պահէ այդ քերականութիւնը որ Քարոզող Եղարացն ուսուցանելու համար շարուրած էր:

Լալանոսի մէջ բերած նամակը ժամանակաւ իրը նախարան դրուած է Ա. Օգոստինսոսի կանոններուն և Քարոզող (լատին) եղարաց Ասամանազրութեան: Այդ կանոնաց և Ասամանազրութեան թարգմանութիւնն ալ, ամրողջապէս կամ մեծ մասսամբ, Յովհաննուն կը պարտին՝ Եր. Բարթողմէնսոսի աջակցութեամբ, զրու կալանոսի ատեններու ու անձէ զեռ դար մըն ալ վերջ, կը գործածէին հայ տեղացի եղարյները: Գրչազրաց մէջ պահուած ուրիշ զրուածոց մասին՝ իրը թարգմանչ չի յիշուիր ինք, բայց ստէպ կը հանդիպինք որ Յովհաննու ինդրանրով թարգմանութիւններ եղած ըլլան:

Նա մինչև վերջին շունչը զրբերու մէջ ապրած պիտի ըլլայ: Վատիկանու Գրչազրացին համեմատ մեռած է 6 Յունուարի և ընդհանուր պարունակութենէն՝ թուի թէ 1347ին:

S 2. — Յակոր Թարգման.

Ընկեր Յովհ. Քոնացւոյն և հաւասա-

րապէս գովուած հեղինակներէն: Առանձինն կամ ձեռնտուութեամբ այլոց՝ այնցան զործեց թարգմանեց որ առաւելութեամբ մը Թարգման ըստեցաւ: Ներկայ էր Քոնայ ժողովոյն և վարդապետաց կարգին մէջ երկորոշ նշանակուած է՝ Յովհաննուն նման երկելի աստուածարան ըլլալով: Վերջէն մտած է ոչ թէ Միարանողաց այլ Քարոզչաց կարգին մէջ, ինչպէս կը հետեւի ասկէ՝ որ շատ գրչազրաց մէջ Քոնացից զինքը յայտնապէս Դոմինիկեան (լատին) ընտանեաց կը վերագրեն, Տիսանց արդէն որ թարգմանած էր Պետրոս Արագոնացիին Յղ. Ասարինուրեաց, Յղ. Աստուածաբանուրեան (ըստ Ղարամեանցի կարծիքին) և Յղ. Մորուրեանց ճառերը և Քարոզները. Եր. Բարթողիմէնսոսի Յղ. Վեցուեայ արարչուրեան ճառը, Յղ. Արքայուրեան ըրիստոնէանցին արարչազրութուրեան պատմուրեան, Նիւմանի յիշած Պետրոս Արագոնացիին Իրաւագիրը և Յովհ. Անկուսին երեց գործերը. Յղ. հոգոյ և Կարոզուրեանց նորին, — Յղ. Կարոզուրեանց նոգոյ, — Յղ. Բեռուրեան հրելուակաց: Դործակցեցաւ նաև Ա. Թ. Ագուինացւոյն Բովանդակուրեան մասերու թարգմանութեանց, ու Պ. Արագոնացւոյն հետ ծիսական զրոց մեկնութեամբ ալ զրադեցաւ, զրու յետոյ պիտի տեսնենց: Վեննայի Միսիթ. Թ. 293 գրչազրին, բաց ի Քոնացւոյն վերականուրեան կը պարունակէ նաև Պորֆիրի Ներածուրինը, Արիստոտելի Ստորոգուրիմները, Գիրք վեց սկրանց ու Արիստոտելի Պերիարմենիասը. Իւլգարանչիր գործին մեկնութիւն մը կը յաջորդէ Պետ. Արագոնացիէն. արդ 227ըդ թէրթին ծանօթութիւնը կը հաստատէ թէ Յակոր այս գործերս ալ հայերէն թարգմանեց (1344ին): — Գրչազրիս զրուած է ի կաֆա 1350ին Յակոր Քոնացի մէկէ մը, որ արդեօք նոյն Յակոր թարգմանն է՝ որոշ չենք զիտեր:

Ումանը իրեն Կ'ընծայեն նաև Գրիստոսի մէկ անձին և երկու բնութեանց վրայ ջատագովական և աստուածարանական զրութիւն մը Տաթևացւոց դէմ:

(Հարունակելի) Ամփոփեց Հ. Գ. Ոսկեան